

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ




Ամենադժվար
պահին ես
քեզ հետ եմ

ԶԳՈՒՇԱՅԻՐ ՀՐԴԵՀԻՑ



ՈՎ ԻՐԱԶԵԿՎԱՆ Է, ՆԱ ՊԱՆՏՊԱՆՎԱՆ Է



ԱՐՅԱԿԱՐԳ ԱԼԻՔ



EMERGENCY CHANNEL

ԴԻՄԱԿԱՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇ

ԱՐՏԱԿԱՐԳ ԳՐԱՐԱՐԱՆ



Ինչպե՞ս է այդքան անհրաժեշտ կրակը դառնում հրդեհ, ինչ պայմաններում է այն բռնկվում ու տարածվում: Ինչպե՞ն կարելի է այն կանխել: Ի՞նչ է նշանակում հրդեհային անվտանգություն: Ի՞նչ անել, եթե հրդեհն, այնուամենայնիվ, բռնկվել է, ինչպե՞ն ցուցաբերել առաջին օգնություն, ինչպե՞ն տարահանել, ինչպե՞ն փրկվել ու փրկել: Այս ու բազմաթիվ այլ հարցերի պատասխանը հաջորդ էջերում կգտնի այս «արտակարգ» գրքույկի ընթերցողը, կդառնա ավելի իրազեկված, պատրաստված ու պաշտպանված:

Հրդեհից կարելի է խուսափել, զգուշանալ, բայց ոչ երբեք վախենալ: Հիշեք, որ խուճապը երբեմն ավելի մեծ վնաս է հասցնում, քան բուն վտանգը: Դրա համար անհրաժեշտ են տարրական գիտելիքներ ու դրանց հետեւողական կիրառում, մի խոսքով՝ անվտանգության մշակույթ:

Այս գրքույկը նրանց համար է, ովքեր ցանկանում են դառնալ «կուլտուրական», ապրել անվտանգ ու անվնաս, լինել խիզախ ու հարեհաս:

Իմ շատ սիրելի տավուշեցի բարեկամ, հանկարծ միանգամյա ընթերցումով չփորձես բաժանվել այս գրքույկից. նրա առանձին հատվածներ կարդա՝ դասընկերներիդ, հարեւաններիդ, հարազատներիդ, ծնողներիդ հետ: Անվտանգության տեսանկյունից նորովի գնահատիր դասասենյակդ, դպրոցդ, բնակարանդ, տունդ, շրջապատդ, ձեր գյուղի տունը, դեզերը, անտառը: Խորհրդակցիր ու կարծիքներ փոխանակիր ուսուցչիդ ու ձեր դպրոց այցելող հրշեջ-փրկարարի հետ: Սովորածդ կիրառիր կյանքում, դարձրո՛ւ փորձ ու հմտություն, դարձրո՛ւ կենսակերպ: Հիշիր. Աստված փրկում է նրան, ով ցանկանում է փրկվել, Աստված փրկում է իրազեկ-պատրաստվածին:



ԿՐԱԿ

Կրակ օգտագործելու հնագույն հետքեր են հայտնաբերվել սիևանթրոպոսների եւ նեանդերթալյան մարդկանց կայանները պեղելիս: Սկզբում մարդիկ հավանաբար օգտվել են կայծակից կամ օրգանական մնացորդների ինքնայրումից առաջացած բնական կրակից: Կրակ ստանալու ժամանակաշրջանը համարվում է վերին քարի դարի սկիզբը: Հայտնի են փայտի երկու չոր կտորներ միմյանց շփելով, շաղափելով կամ կայծքարե հրահանի միջոցով կրակ ստանալու հնագույն եղանակները: Վերջին միջոցը կիրառվում էր մինչեւ 19-րդ դարում ֆոսֆորե լուցկու հայտնագործումը: Կրակը սկզբում գործածվել է ցրտից, գազաններից պաշտպանվելու, սննդամթերքը եփելու համար, հետագայում՝ նաեւ տեխնիկական նպատակներով: Կրակը նպաստել է նախնադարյան հորդայի ներսում սոցիալական կապերի ձեւավորմանն ու ամրապնդմանը: Կրակի պահպանումը պահանջում էր չընդհատվող, խիստ համաձայնեցված կոլեկտիվ գործունեություն: Նախնադարյան խմբերի ողջ կենսագործունեությունը տեղի էր ունենում խարույկի կամ օջախի շուրջը: Շատ ժողովուրդների հավատալիքների ու դիցաբանության մեջ կրակը կարեւոր տեղ է գրավել:

Կրակապաշտությունը եւ արեւապաշտությունն անհիշելի ժամանակներից տարածված ու արմատավորված են եղել եւ Հայաստանում: Ըստ Մովսես Խորենացու, սրբազան «արամազդական հուրը» («արեգակնային կրակը») անշեջ պահվում էր Հայոց ամենադից մեհյանում՝ Բագավանում: Իսկ հին հունական դիցաբանության մեջ կրակի հովանի աստվածը համարվում է Հեփեստոսը, հռոմեականում՝ Վեստան: Պլուտարքոսը վկայում է, որ Վեստայի գլխավոր մեհյանը կառուցված էր Հռոմում՝ երկրագնդի նմանությամբ (բոլորակաձեւ), որի մեջ զետեղված էր «մշտապառ հուրը»՝ ի նշան «արեգակնային հրո»: Վեստայի մեհյանն սպասարկել եւ կրակն անշեջ պահել են կույս քրմուհիները՝ վեստալուհիները:

Հին հունական դիցաբանության մեջ մի կերպար կա՝ Պրոմեթեւսը: Առասպելի հնագույն տարբերակի համաձայն՝ Պրոմեթեւսը Օլիմպոսից (որտեղ ապրում էին աստվածները) հափշտակելով կրակը՝ տվել է մարդկանց, որի համար Ջեւսի հրամանով շղթայվել է ժայռին (Կովկասյան լեռներում) եւ դատապարտվել տանջանքների: Ամեն օր արծիվը հոշոտել է նրա լյարդը, որը գիշերվա ընթացքում վերականգնվել է: Այս տանջանքներն իբր տեսել են մոտ 30 հազար տարի, մինչեւ Հերկուլեսը նետահարելով սպանել է արծիվն ու ազատել Պրոմեթեւսին: Եսքիլեսի «Շղթայված Պրոմեթեւսը» ողբերգության համաձայն՝ Պրոմեթեւսը մարդկանց նաեւ հաղորդակից է դարձրել արվեստներին, երկրագործությանը, բժշկությանը, սովորեցրել բնակարան կառուցել, հաշվել, գրել-կարդալ, նավարկել, ծանոթացրել է մետաղներ հանելու եւ մշակելու արվեստին եւ այլն: Այսինքն թե՛ այս ամենն անհնար էր առանց կրակի:

Բայց ի՞նչ իմանար խեղճ Պրոմեթեւսը, որ մարդկանց տված պարգեւը, ոմանց անփույթ ու անզգույշ, անգիտակից վարմունքի պատճառով կարող է հաճախ դառնալ իսկական չարիք: Ախր **հրդեհը նույն կրակն է, բայց չվերահսկվող կրակը:**



ՀՐԴԵՅՆԵՐ

Ինչպես գիտենք, այրման համար նույն տեղում եւ նույն պահին պետք է լինեն.

այրվող նյութ **օդ (թթվածին)** **կայծ կամ կրակ**

Այս երեքից որեւէ մեկի բացակայությունն անհնար է դարձնում այրումը կամ էլ՝ բերում արդեն այրվող նյութի (կրակի) մարմանը:




Այրվող նյութեր հանդիպում են ամենուր, դրանք կարող են լինել **գազային, հեղուկ կամ պինդ վիճակում (օրինակ՝ գազ, բենզին, փայտ)**: Այրումը կարող է ընթանալ դանդաղ կամ պայթյունի ձեւով: Այրման ժամանակ ջերմություն է անջատվում, եւ ջերմաստիճանը կարող է հասնել մինչեւ 1000-1200 աստիճանի՝ ըստ Ցելսիուսի սանդղակի:

Հրդեհը չվերահսկվող այրումն է, որն ուղեկցվում է նյութական արժեքների ոչնչացումով եւ ստույգ սպառնալիքով՝ մարդկանց կյանքի ու առողջության համար:

Հիշենք այս ասացվածքը՝ «Առաջին րոպեին հրդեհը կարելի է մարել մի բաժակ ջրով, երկրորդ րոպեին՝ մի դույլ ջրով, երրորդ րոպեին՝ հրշեջ մեքենայով»:

Ինչպես ասացինք՝ այրման համար անհրաժեշտ է երեք պայման՝ այրվող նյութ, օդ (թթվածին) եւ բռնկման աղբյուր: Հետեւաբար այրման գործընթացը դադարեցնելու կամ այրումը հանգցնելու համար անհրաժեշտ է այս երեք պայմաններից մեկը վերացնել այրման գոտուց: Հրդեհաշիջման (հրդեհը հանգցնելու) վերաբերյալ օրեցօր զարգացող տեխնիկական գիտությունը հիմնված է այս հանրահայտ դրույթի վրա, որի մասին ոմանք տարրական պատկերացում անգամ չունեն:

Հրդեհը հանգցնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետեւյալ գործողությունները.

-  այրման գոտուց անջատել, հեռացնել այրվող նյութը.
-  դադարեցնել օդի թափանցումն այրման գոտի.
-  այրվող նյութը սառեցնել, ջերմաստիճանն իջեցնել՝ ինքնաբոցավառման ջերմաստիճանից ցածր:

Այս գործողությունները կատարվում են զանազան ձևերով եւ միջոցներով: Հրդեհաշիջման պրակտիկայում մեծ տարածում ունի հրդեհների մարումը ջրի օգնությամբ: Ջուրը բնության ամենատարածված նյութերից մեկն է: Այն օժտված է հրդեհաշիջման հրաշալի տվյալներով: Երբ ջուրը լցնում են կրակի վրա, այն կլանում է կրակի ջերմությունը, իջեցնում նյութի բռնկման ջերմաստիճանից ցածր, որի հետեւանքով էլ հանգցնում է հրդեհը:

Հրդեհաշիջման նպատակներով օգտագործվում է նաեւ փրփուրը, որն ստացվում է բավական թանկարժեք նյութերից,՝ չափազանց բարդ ճանապարհով: Երբ փրփուրը լցվում է այրվող նյութի վրա, այն օդն անջատում է այրման գոտուց, հանգցնում հրդեհը: Փրփուրով հանգցնում են հիմնականում դյուրավառ հեղուկները, որոնք շատ դեպքերում ջրով չեն մարվում:

Հրդեհները կարելի է հանգցնել նաեւ չայրվող նյութերով՝ հողով, ավազով, խարամով եւ այլն: Դրանցով նույնպես կարելի է որոշ դեպքերում ծածկել այրվող նյութը, նրան անջատել օդից եւ հանգցնել կրակը:



Յուրաքանչյուր հրդեհաշիջման դեպքում պետք է հաշվի առնել, թե ինչ է այրվում, տեղը, ստեղծված իրավիճակը, հրդեհի մակերեսը եւ մի շարք այլ հանգամանքներ, որից հետո միայն որոշել, թե ինչ միջոցներով եւ եղանակով պետք է մարել այն:

ՅՐԴԵՋՆԵՐԸ ՏԱՆԸ

Որպեսզի հրդեհները չսպառնան ձեզ, ձեր ընտանիքի անդամներին ու ձեր նյութական միջոցներին, նախեւառաջ պետք է այնպես ապրել, որ դրանք ընդհանրապես չլինեն:

Միշտ պետք է հիշել հակահրդեհային անվտանգության հետեւյալ կանոնները.



չի՛ կարելի խաղալ լուցկիներով կամ կրակվառիչներով.



առանց մեծահասակների մի՛ մոտեցիր վառարանին եւ մի՛ բացիր դռնակը: Դուրս թռչող կրակներից կամ մոխրից կարող է հրդեհվել բնակարանը.



չի՛ կարելի օգտագործել ինքնաշեն էլեկտրասարքավորումներ.




մեկ վարդակից (ռոզետկա) չի՛ կարելի միացնել մի քանի էլեկտրասարքավորում.





տնից կամ սենյակից դուրս գալիս մի՛ մոռացեք անջատել էլեկտրասարքավորումները (հատկապես արդուկը, հեռուստացույցը, տաքացուցիչները).





տոնածառից մի՛ կախիր էլեկտրական զարդեր եւ լույսեր, նաեւ հիշի՛ր, որ բամբակյա մորուքներն ու թղթե թիկնոցները հեշտ են բռնկվում.


 երբեք տանը մի՛ վառիր բենգալյան կրակներ եւ հրավառելիք (եւ ընդհանրապես, ավելի լավ է դա անել միայն մեծահասակների ներկայությամբ)։

 բենգինով լցված մետաղյա տարողությունն ավելի անվտանգ է, քան բենգինից դատարկված տարողությունը, քանի որ դրա ներսում կարող են կուտակվել բենգինի պայթուցավտանգ գոլորշիներ՝ օդի հետ խառնված վիճակում։









 չի՛ կարելի կրակի մեջ գցել անծանոթ առարկաներ, մասնավորապես՝ աէրոզոլային տուփեր, քանի որ դրանք եւս պայթուցավտանգ են։

 երբ տանը կա կրակմարիչ, ապա անպայման ծանոթացի՛ր դրա օգտագործման կանոններին։ Հիշի՛ր, որ մեկ կրակմարիչը փոխարինում է լոգարանի մեկ վանճա ջրին։









 կրակմարիչները լինում են՝ փրփրային, ածխաթթվային եւ փոշե։ (ածխաթթվային կրակմարիչներով կարելի է մարել բոլոր տեսակի այրվող նյութերը, նույնիսկ լարման տակ գտնվող էլեկտրասարքավորումները։ Իմիջիայլոց՝ լարման տակ գտնվող էլեկտրասարքավորումները չի՛ կարելի մարել ջրով կամ փրփուրային կրակմարիչներով, քանի որ կարող եք հոսանքահարվել։ Նախ պետք է անջատել հոսանքից, այնուհետեւ՝ մարել)



 մի՛ չորացրու լվացքը էլեկտրասալիկի վերելում։ շատ լավ է, որ դու մայրիկին օգնում ես, բայց վատ կլինի, եթե այն բռնկվի եւ հրդեհի պատճառ դառնա։

Վառարաններ ու կենցաղային ջեռուցման սարքեր օգտագործելիս **արգելվում է.**

-  Վառարանները տեղադրել ելքի-մուտքի ուղիներում եւ թողնել առանց հսկողության.
-  Վառարանները գործարկելու համար օգտագործել բենզին եւ այլ դյուրավառ հեղուկներ.
-  բնակելի շենքերում ծխահեռացման համար օգտագործել օդափոխման եւ գազային անցուղիները.
-  Վառարանները տեղադրել դյուրավառ պատերից, միջնորմներից, ինչպես նաեւ վառողունակ իրերից ու առարկաներից 1,5 մետրից պակաս հեռավորության վրա.
-  Վառարանի գործարկումն առանց 3 սմ հաստության ավազի շերտով լցված մետաղական տակդիրի, որը վառարանի առջեւի կողմից պետք է դուրս գա 50 սմ, իսկ կողքերից՝ 25 սմ.
-  թիթեյա վառարանների ծխնելույզը դուրս բերել տանիք. թիթեյա վառարանների ծխնելույզներն անհրաժեշտ է երկարացնել եւ լուսամուտով դուրս հանել.
-  վառարանի վրա, նրան մոտ պահել կամ չորացնել լվացք, վառելափայտ եւ այլ վառողունակ իրեր եւ նյութեր.
-  գործող վառարանները թողնել առանց հսկողության կամ դրանց հսկողությունը վստահել երեխաներին.



-  հեղուկ վառելանյութով գործող ջեռուցման սարքերը, մասնավորապես՝ նավթավառը, լիցքավորել աշխատանքի ժամանակ.
-  օգտագործել ոչ ստանդարտ (տնայնագործական), շիկացման բաց գալարագծերով եւ 2 կվտ հզորությունը գերազանցող էլեկտրաջեռուցիչ սարքեր.
-  շահագործել վնասված մեկուսացումով (մեկուսիչ հատկությունները կորցրած) մալուխներ եւ էլեկտրալարեր.
-  օգտվել անսարք վարդակներից, անջատիչներից, այլ տիպի էլեկտրական հարմարանքներից ու սարքերից.
-  գործարանային ապահովիչների փոխարեն օգտագործել ինքնասարք ապահովիչներ, այսպես կոչված «խծուծալարեր».
-  էլեկտրական տաքացման պարագաների տեղադրումն առանց հրակայուն տակդիրի եւ իրերից ու առարկաներից մեկ մետրից պակաս հեռավորության վրա.
-  էլեկտրական ցանցին միացնել նորմայից շատ էլեկտրասպառիչներ.
-  էլեկտրական ցանցին առանց հսկողության միացված թողնել էլեկտրաջեռուցման սարքեր ու այլ էլեկտրասպառիչներ եւ այլն:



ՉԳՈՒՅՑՆ, ԳԱՁ Է




Ֆրդեհավտանգության տեսակետից գազը բոլոր վառելանյութերից ամենավտանգավորն է: Այն օդի հետ խառնվելով ստեղծում է պայթուցավտանգ խառնուրդ, որը նպաստավոր պայմանների առկայության դեպքում պայթում է եւ հրդեհի ու ավերածությունների պատճառ դառնում:


Գազի վտանգավորությունը մեծանում է նրանով (խոսքը կենցաղում օգտագործվող գազի մասին է), որ այն օդից ծանր է: Այդ պատճառով շուտ չի հեռանում սենյակից, ստեղծում է հրդեհի եւ պայթյունի առաջացման իրական պայմաններ: Բացի դրանից՝ գազն ընդունակ է թափանցել ամենամեղ անցքերից եւ տեղափոխվել: Եղել են դեպքեր, երբ գազը ջեռուցման համակարգի, ջրամատակարարման խողովակաշարի անցքերով տեղափոխվել է հարյուրավոր մետրեր, նույնիսկ կիլոմետրեր, լցվել այլ շենքերի նկուղային հարկեր: Արձանագրված են նաեւ այնպիսի դեպքեր, երբ գազը հողաշերտի միջով անցել, կուտակվել է մոտակա տների հատակների տակ, լուցկի վառելիս պայթել եւ դժբախտ դեպքերի պատճառ դարձել (Տավուշի, Գեղարքունիքի մարզերում տներ պայթեցին, իսկ Վայոց ձորի


մարզում Ջերմուկի մոր եւ մանկան հանգստյան տան պայթյունից տասնչորս մարդ զոհվեց):


Անհրաժեշտ է իմանալ, որ կենցաղում օգտագործվող գազը թունավոր է, եւ օդի մեջ դրա փոքր քանակությունը կարող է մահացու լինել մարդու համար:

Գազով գործող պարագաների հետ անզգույշ վարվելը կարող է դժբախտ դեպքերի եւ նյութական մեծ կորուստների պատճառ դառնալ: Գազային պարագաներ օգտագործելու ժամանակ պետք է միշտ հիշել եւ խստորեն կատարել հրդեհային անվտանգության կանոնների պահանջները:

 Արգելվում է ինքնաշեն գազօջախների, սյունակաթսաների (կոլոնկա), բալոնների ձեռք բերումը եւ դրանց տեղադրումը համապատասխան մասնագիտություն չունեցող մարդկանց կողմից: Գազային պարագաների մոնտաժումը, տեղադրումը եւ վերանորոգումը պետք է կատարեն միայն գազի շահագործման գրասենյակների մասնագետները:

 Սենյակում գազի հոտ զգալիս չպետք է վառել լուցկի, ծխել, քանի որ դա կառաջացնի պայթյուն: Այդ դեպքում անհրաժեշտ է նախօրոք օդափոխել սենյակը, ստուգել ծխնելույզի եւ օդափոխության անցքի քարշը՝ անցքերին բարակ թուղթ մոտեցնելով, որից հետո միայն օգտագործել գազի պարագաները:

 Գազօջախը, սյունակաթսան վառելիս նախ վառած լուցկին մոտեցնել այրիչին, հետո դանդաղ բացել փականը: Եթե այրումը կատարվում է անկանոն, պետք է անմիջապես փակել փականը եւ այդ մասին հայտնել գազի շահագործման գրասենյակ:

 Չի կարելի գազի պարագաները թողնել գործող վիճակում գիշերը կամ տնից հեռանալիս, դրանց գործարկումը հանձնարարել երեխաներին կամ այնպիսի մարդկանց,

որոնք ծանոթ չեն գազի պարագաների օգտագործման անվտանգության պահանջներին:

Գազի այրումը դադարեցնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է փակել խողովակաշարի փականը եւ ապա՝ պարագայի փականը:

Խստիվ արգելվում է սենյակում, որտեղ տեղադրված է գազի պարագան, պահել դյուրավառ հեղուկներ:

Չի կարելի գազի խողովակաշարից կախել ծանրություն, կապել վրացքի պարան եւ այլն:

Արգելվում է քնել այն սենյակում, որտեղ տեղադրված է գազի պարագան:



Գազից հրդեհ է ծագում այն դեպքում, երբ գազի խողովակաշարում, գազօջախի կամ սյունակաթսայի որեւէ հանգույցում առաջանում է անհերմետիկություն, որտեղից գազը հոսելով հասնում է բաց կրակին եւ բռնկվում:

Գազի խողովակաշարի եւ պարագաների անսարքություններից առաջացած հրդեհը հանգցնելիս ամենից առաջ անհրաժեշտ է՝ փակել խողովակաշարի վրա տեղադրված ընդհանուր փականը,

դադարեցնել գազի հոսքը: Երբ բռնկվում են բնակարանի իրերն ու առարկաները, հրդեհը պետք է հանգցնել սովորական միջոցներով եւ եղանակներով:

Հրդեհի ժամանակ մեծ վտանգ է ներկայացնում գազի բալոնը: Տաքանալիս այն կարող է պայթել՝ առաջացնելով ծանր հետեւանքներ: Եթե հրդեհի ժամանակ կրակը տարածվում է դեպի հեղուկ գազի բալոնը, այն պետք է անմիջապես անջատել գազօջախից եւ հեռացնել բնակարանից, տանել անվտանգ տեղ, հետո ձեռնամուխ լինել հրդեհի վերացմանը:

Ամեն դեպքում հրդեհների ժամանակ հարկավոր է չկորցնել զգոնությունը, որը շատ բանով կնպաստի ծայրահեղ բարդ պայմաններում ժամանակին կողմնորոշվելուն:

Ավելորդ չենք համարում մեկ անգամ եւս հիշեցնել, որ հրդեհ առաջանալու դեպքում անհրաժեշտ է անմիջապես զանգահարել 911 հեռախոսահամարով:

ԻՍԿ ԵԹԵ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ՏԱՆԸ ՀՐԴԵՅ Է ԲՈՆԿԵԼ



Եթե հրդեհով բռնկված սենյակի (բնակարանի) դուռը դրսից բացեք, ապա կրակը կհարվածի ձեզ դեմ-դիմաց: Ուստի դուռը պետք է բացել դանդաղ եւ անպայման կանգնել դռան կողքը:



Եթե **մուտքում** (աստիճանահարթակում) հրդեհ է, եւ դուք բացում եք ձեր բնակարանի դուռը, ապա ձեր բնակարանը վերածվում է մի հսկա ծխնելույզի, եւ եթե ծուխն անցնի բնակարանի միջով, ապա բնակարանում այլեւս ապրել չի լինի, մինչեւ այն հիմնովին չվերանորոգվի:



Եթե տանը բռնկած հրդեհը մեծ չէ, կարելի է փորձել անմիջապես մարել այն՝ կրակի վրա **զցելով** պինդ կտոր, ծածկոց կամ վերարկու:



Հիշիր, այրվող **բենզինը** կամ **նավթը** չի՛ կարելի մարել ջրով, քանի որ բենզինը ջրից թեթև է, ջուրը իջնում է հատակը եւ կրակը մարելու հատկությունը կորցնում: Նույն պատճառով, եթե ճաշ պատրաստելիս այրվում է թավայի միջի յուղը, ապա ջուր չի՛ կարելի լցնել, այլ պետք է թավան ծածկել թաց սրբիչով:

Եթե կրակն անմիջապես չի մարում, անհապաղ տնից դուրս վազիր դեպի **անվտանգ** վայր եւ միայն այդ ժամանակ ահազանգիր հրշեջ ծառայություն 911 հեռախոսահամարով (կամ հարեւանին խնդրիր ահազանգել):



Դուրս վազելիս անպայման պետք է **փակել** այն սենյակի դուռը՝ որտեղ հրդեհ է բռնկել: Փակելով դուռը հնարավոր է ոչ միայն կանխել ծխի տարածումը, այլեւ երբեմն մարել կրակը, քանի որ թթվածնի մուտքը փակվում է (եթե, իհարկե, սենյակի պատուհանները փակ են):




Եթե սենյակում հրդեհ է, չի՛ կարելի կտրել **պատուհանների ապակիները**, այլապես սենյակ մուտք կգործի թարմ օդ (թթվածին), որից կրակն ավելի կուժեղանա:




Եթե հրդեհը տարածվել է նաեւ շքամուտքում, ապա երբեք մի՛ մտիր **վերելակ**: Այն կարող է անջատվել, եւ դու կխեղդվես, քանի որ ծուխը նախ եւ առաջ կուտակվում է վերելակի հորանում:




Եթե ապրում եք **վերին հարկերում**, մի՛ փորձիր դուրս գալ: Հասնելով 2-3-րդ հարկ՝ դու կարող ես թունավորվել այրումից առաջացած թունավոր ծխից: Ուստի մնա տանը, բոլոր դռները եւ փեղկերը փակիր թաց շորերով: Անմիջապես ահազանգիր 911 եւ հրշեջներին հայտնիր քո բնակարանի ճշգրիտ հասցեն: **Պատուհանից** օգնության կանչիր հարեւաններին եւ անցորդներին: Այնուհետեւ


 փակիր պատուհանները եւ իջեցրու վարագույրները: Հատակը եւ դռները թրջիր ջրով: Գազը եւ էլեկտրականությունն անջատիր անմիջապես:

 Հրդեհի ժամանակ **ծուխն** ավելի վտանգավոր է, քան կրակը: Մարդկանց մեծ մասը ծխից է խեղդվում (հատկապես վտանգավոր է պլաստմասսաների այրումից առաջացող թունավոր ծուխը): Եթե գտնւմ ես, որ շնչահեղձ ես լինում, ապա կքանստած կամ սողալով (չորեքթաթ) շարժվիր դեպի ելքը, քանի որ ներքեւում ծուխը քիչ է: Ուժեղ ծխի դեպքում պետք է շնչել թրջած կտորի միջով:



Ինչպես գործել
հրդեհի ժամանակ

 Հիշիր, մի քանի անգամ ծուխը ներշնչելուց հետո մարդը կարող է կորցնել գիտակցությունը: Ինչպե՞ս մարել մարդու վրայի **այրվող հագուստը**: Պետք է հիշել հետեւյալ օրենքը. «Կանգմիր, ընկիր, գլորվիր»: Վառվող մարդուն պետք է զցել գետնին եւ գլորել, այդպես մարելով կրակը: Կարելի է նաեւ փաթաթել ծածկոցով կամ խիտ գործվածքով կտորով:

 Շատ վտանգավոր է նաեւ **մարմանդ**, հանդարտ կրակը: Օրինակ՝ երբ չհանգցրած ծխախոտի մնացորդն ընկնում է ծածկոցին կամ բարձին, կամ էլ մխում է պլաստմասսայե աղբամանում, ապա մարմանդ հրդեհի ծխի պատճառով

մեկ ժամում կարող են զոհվել ընտանիքի բոլոր անդամները:



Հրդեհի ժամանակ չի կարելի թաքնվել վարագույրների հետևում, պահարաններում, սեղանների եւ մահճակալների տակ: Իսկ եթե թաքնվել ես, ապա անպայման պետք է **արձագանքել** (պատասխանել), երբ հրշեջ-փրկարարները քեզ կանչում են:



Սպասելով հրշեջների գալուն՝ խուճապի մի՛ մատնվիր եւ մի՛ ցատկիր պատուհանից դուրս: Հիշի՛ր, քեզ անպայման **կփրկեն**:

Երբ **հրշեջները** ժամանեն, լսիր նրանց եւ մի՛ վախեցիր: Նրանք շատ լավ գիտեն, թե ինչպես քեզ փրկեն:




ՀՐԴԵՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ


Գյուղական բնակավայրերում ապրողների համար կան հրդեհի այլ աղբյուրներ եւս՝ անասնակերի կուտակման ժամանակ թույլ տրված սխալները:

Սա վերաբերում է եւ մեծերին, եւ փոքրերին:




Ինչպես ցույց է տալիս տարիների փորձը, չոր եւ շոգ ամիսներին անհամեմատ մեծանում է հրդեհների առաջացման վտանգը հատկապես գյուղացիական տնտեսությունների անասնակերի կուտակման տեղամասերում: Ցանկացած անզուլություն, հրդեհային անվտանգության կանոնների պահանջների փոքր իսկ անտեսումը կամ դրանցից շեղումը կարող են հանգեցնել անուղղելի հետեւանքների: Եվ որպեսզի այդ վտանգը չդառնա տխուր իրողություն, եւ կանխվի չարիքը, հարկավոր է իրականացնել հրդեհային անվտանգության ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

 անասնակերի դեզերը պետք է տեղակայվեն շենքերից եւ շինություններից ոչ պակաս, քան 50 մետր, ճանապարհներից՝ ոչ պակաս, քան 20 մետր, էլեկտրահաղորդման գծերից՝ ոչ պակաս, քան 15 մետր հեռավորության վրա.




 դեզի հիմնատակի մակերեսը 150 քառակուսի մետրից ավելի չպետք է լինի.

 առանձին դեզերի հակահրդեհային միջտարածությունը պետք է լինի 20 մետրից ոչ պակաս.

դեզի բարձրությունը չպետք է գերազանցի 5, իսկ երկարությունը՝ 30 մետրը.

-  թաղամասերի հակահրդեհային միջտարածությունները (թաղամասում թույլատրվում է տեղադրել մինչև 20 դեզ) պետք է լինեն 100 մետրից ոչ պակաս.
-  կտրականապես արգելվում է դեզի շրջակայքում կրակի օջախ անելը, ծխելը եւ բաց կրակից օգտվելը
-  դեզերը պետք է ապահովված լինեն սկզբնական հրդեհաշիջման միջոցներով եւ այլն:

Խոտի դեզերում առաջացած հրդեհների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց առաջացման հիմնական պատճառներն են՝

-  դեզերի տեղակայման հակահրդեհային նորմաները եւ կանոնների պահանջների խախտումները,
-  էլեկտրահաղորդման գծերի սխալ մոնտաժումը, դրանց տակ դեզերի տեղակայումը,
-  կրակի հետ անզգույշ վարվելը, երեխաների խաղալը կրակի հետ եւ այլն:

Հատկապես մտահոգության տեղիք է տալիս երեխաների՝ կրակի հետ խաղալուց առաջացած հրդեհների վերլուծությունը, քանի որ այդ հրդեհներում տուժում են երեխաները: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ երեխաները մնում են առանց հսկողության, խաղում են լուցկով եւ այլ հրավտանգ առարկաներով՝ երբեմն հրդեհելով խոտի դեզերը: Ծնողները պետք է միշտ հիշեն, որ անուշադրության մատնված երեխան կարող է հրդեհի առաջացման պատճառ, իսկ երբեմն էլ՝ դրա անմիջական զոհը դառնալ:



ՀՐԴԵՅ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅՈՒՄ



Անպայման տվեք՝ թող մեծերն էլ կարդան

Քննարկենք այն գործողություններն ու անհրաժեշտ միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն ավտոմեքենայում ծագած հրդեհի ժամանակ:

Կան երեք առավել կարևոր իրեր, որոնք միշտ պետք է ունենալ ավտոմեքենայում. դեղամիջոցներով արկղիկ, կրակմարիչ եւ ոչ սինթետիկ ծածկոց: Եթե ավտոմեքենան այրվում է, ապա.



կանգնեցրեք ավտոմեքենան եւ անջատեք շարժիչը.



զբաղվեք տուժածներով.



կանչեք օգնություն (բժշկական եւ տեխնիկական), հրշեջ-փրկարարների, ոստիկանների.



հետեւեք, որ բենզինի հոսակորուստ չլինի, ծխախոտը կամ մի փոքր ցնցումը կարող են հրդեհի պատճառ դառնալ:

Ավտոմեքենայում կրակը համարյա միշտ առաջանում է շարժիչի ծածկոցի տակ՝ բենզին մատակարարող խողովակը պատռվելու, կամ գազի բալոնում (կարբյուրատոր) այրման հետեւանքով: Առաջինը, որ անհրաժեշտ է անել՝ այրման փականից բանալին հանելն ու հպիչներն իրարից բաժանելն է: Եթե մեքենան գազով է աշխատում՝ փակում են բեռնախցիկում գտնվող վառելիքի բաքի վրայի փականները: Դրանից հետո կրակմարիչի շիթն ուղղում են բոցի հիմքի վրա: Եթե կրակմարիչ չկա՝ օգտագործեք ավագ, հող, ծածկոց, հագուստ: Արդյունավետ է նաեւ ջրով լի փաթեթը, որը կարելի է ուժեղ նետել ավտոմեքենայի բոցով պատված հատվածի վրա:

Այնուհետև.



եթե հրդեհն ընդգրկել է միայն կարբյուրատորը, ապա բավական է շարժիչն աշխատեցնել առավելագույն պտույտներով, ինչը կօգնի կրակը մարելուն.



եթե կան վիրավորներ, անհրաժեշտ է նրանց տեղափոխել անվտանգ տեղ.



եթե կրակն ընդգրկել է մեքենայի հետեւի մասը, որտեղ գտնվում է բենզինի բաքը, ապա միակ բանը, որ մնում է անել՝ մեքենայից արագ հեռանալն է: Կինոնկարների այն տեսարանները, որտեղ պայթում է ավտոմեքենա, կյանքում բավական հազվադեպ են. դա կարող է տեղի ունենալ, եթե



բեմզիմի բաքը գրեթե դատարկ է կամ մեքեման աշխատում է գազասարքով.



եթե հրդեհմն ընդգրկել է ավտոմեքեմայի սրահը, իմացեք՝ վտանգը մեծ է, կրակն արագ տարածվում է կտորից, պլաստիկ եւ սինթետիկ թելերից կազմված երեսպատվածքով:

ՄԻ ՔԱՆԻ ԸՆԴՅԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹ, ԵԹԵ ՅՐԴԵՅ Է ԾԱԳԵԼ

Անհրաժեշտ է, առանց գլուխը կորցնելու, արագ արձագանքել հրդեհիմն՝ օգտագործելով կրակը մարելու բոլոր մատչելի եղանակները (ավագ, ջուր, ծածկոցներ, հագուստներ, կրակմարիչներ եւ այլն): Ցանկացած կրակ, որ հնարավոր չէ ամենակարճ ժամանակում լրիվ սանձահարել, պահանջում է հրշեջների աշխատանք: Պետք է փրկարար ծառայություն զանգահարել անմիջապես, այլ ոչ այն ժամանակ, երբ արդեն ուշ կլինի: Կանչը պետք է պարունակի հստակ տեղեկատվություն հրդեհի վայրի, դրա պատճառի եւ մարդկանց համար հավանական սպառնալիքի մասին: Հարկավոր է հայտնել ձեր անունը, ազգանունը եւ հեռախոսի համարը՝ հետագա ճշգրտումներ ստանալու համար:



Անհրաժեշտ է հիշել, որ հրդեհից վախեցած երեխաները կարող են թաքնվել ամենաաննկատելի տեղերում, օրինակ, մահճակալի տակ եւ գրեթե երբեք չեն արձագանքում անժանոթ ձայների :

Վտանգավոր է մնալ ծխապատ շինություններում գազի եւ թունավոր ծխի առկայության պատճառով. բավական է ծխի մի քանի քուլա կուլ տալ, եւ մարդը կորցնում է գիտակցությունը:

Գազի վնասակար ներգործությունից խուսափելու համար շատ կարեւոր է արագ տարահանումը: Եթե բոցը մարելն անհնար է,

ապա մարդկանց փրկելուց հետո հարկավոր է հեռացնել գազով բալոնները, ավտոմեքենաները, հնարավոր արխիվները, բոլոր դյուրավառ նյութերն ու թանկարժեք իրերը: Հրշեջների ժամանմանը սպասող անձանցից ամենասթափը, ով տվյալ իրավիճակում գլուխը չի կորցրել, պետք է համակարգի բոլոր տուժածների տեղափոխումը, ցանկացած միջոցով պաշտպանի հրդեհի օջախ տանող ուղիները՝ կրակի տարածումը կանխելու համար այրման տեսակետից առավել վտանգավոր հատվածների վրա ջուր ցանելով կամ թաց քաթանով ծածկելով: Նա պետք է իրավիճակը հսկողության տակ պահի, որպեսզի խուճապ չառաջանա:

Հրդեհի ժամանակ անհրաժեշտ է՝ մշտապես ջուր օգտագործել մարելու համար, փակել դռներն ու պատուհանները (քանի որ օդի հոսանքները բորբոքում են կրակը), փակել գազը, անջատել էլեկտրաէներգիան: Ձեռնարկություններում, արտադրամասերում կանգնեցնել մեքենաներն ու մեխանիզմները, ջրով սառեցնել դյուրավառ նյութերը:

Այրվող շինության որել էլք բացելով՝ պետք է առավելագույնս ուշադիր լինել, քանի որ թթվածնի նոր մուտքը կարող է ուժեղացնել բոցը: Այդ նպատակով ավելի լավ է օգտագործել մահակ եւ գործել որոշ հեռավորությունից, եթե հնարավոր է՝ պատասպարանից: Եթե տեղանքը ծխապատված է, ապա պետք է առաջ գնալ կռացած՝ դեմքը ծածկելով, իսկ եթե անհրաժեշտ է՝ գլուխը խոնավ կտորով ծածկելով, հագուստը ջրով առատորեն թրջելով:


Անհրաժեշտ է հիշել հետեւյալ կանոնները.





Եթե բոցը մարելու հնարավորություն կա, ապա ավելի լավ է շարժվել կրակին հակառակ՝ աշխատելով սահմանափակել դրա տարածումը եւ կրակն ուղղել ելքի կողմը կամ այնտեղ, որտեղ չկան այրվող նյութեր.




միշտ ձեզ ապահովեք պարանով, երբ պետք է գնալ միջանցքի երկայնքով, բարձրանալ տանիք, իջնել նկուղ եւ այլ վտանգավոր տեղեր, քանզի ուժեղ ծխի մեջ դժվար է որոնել հետդարձի ճանապարհը.

 բոցն առավել արդյունավետ է մարել կրակի մակարդակի բարձրությունից.

 եթե մարդու հագուստը կրակով բռնկվել է՝ մի թողեք, որ վազի, նրան պառկեցրեք գետնին, փաթաթեք ծածկոցներով եւ առատորեն ջրեք: Այրվածքներ ստացած մարդուն ոչ մի դեպքում մի մերկացրեք, եթե հագուստն արդեն այրվել է, նրա մարմնի տուժած մասերը պատեք մանրէահամ (ստերիլ) բամբակով.

 հրդեհը մարեք հիդրանտով կամ ջրով՝ հաշվի առնելով շենքի կառուցվածքային տարրերի, մասնավորապես հեմապատերի հնարավոր քայքայումները: Կարելու է ոչ թե օգտագործվող ջրի քանակը, այլ դրա ճիշտ գործադրումը.

 մարելով բռնկման աղբյուրը՝ անհրաժեշտ է ստուգել մյուս հնարավոր օջախների գոյությունը, որոնք կարող են վերացնել բոլոր նախկին ջանքերը: Ստուգումները պետք է կատարել օրվա ընթացքում մի քանի անգամ՝ հատկապես ուշադրություն դարձնելով ձեղնահարկերին, մառաններին, շենքի այն հատվածներին, որտեղ օրվա ընթացքում քիչ են մտնում:

Հրդեհի ժամանակ հաճախ են հանդիպում մարդկանց կյանքին սպառնացող վտանգներ՝ հնարավոր պայթյուններ, ծխի պատճառով անբավարար տեսանելիություն, աշխատանք բարձրության վրա, իրադրությանն անիրագրելիություն, աշխատանքի նորմալ ռեժիմից շեղված էլեկտրական սարքավորում. այս ամենը պահանջում է առավելագույն ուշադրություն:

Այրվածքների դեպքում բուժումը կատարվում է դրանց ծանրության աստիճանից ելնելով: Որպես առաջին օգնություն կարող են կիրառվել սառը ջրով դեղաթրջոցներ, այնուհետև պահանջվում է բժշկական օգնություն:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՅՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ



Այրված հատվածը 10-15 րոպե
դ՛նել հոսող սառը ջրի տակ

Կիրառեք ստերիլ վիրակապ

Խմել ցավազարկող



Առաջին Օգնություն
Այրվածքներ

Մարդու ամենօրյա գործունեության ընթացքում հաճախ են հանդիպում տարբեր տեսակի ու աստիճանի այրվածքներ: Այրվածքները շատ ցավոտ են, հաճախ հաշմող ու այլանդակող: Դրանք կարող են վարակի, շոկի պատճառ հանդիսանալ: Այրվածքի դեպքում, իմանալով առաջին օգնության ճիշտ քայլերը, դուք զգալիորեն կթեթևացնեք տուժածի վիճակը եւ կկանխեք բարդությունները:

Ջերմային այրվածքների առաջացման պատճառը բարձր ջերմաստիճանն է, օրինակ՝ տաք հեղուկները կամ առարկաները, գոլորշիները կամ բոցը:

Այրվածքները կարող են լինել տարբեր խորության:

Սակերեսային այրվածքը մաշկի վերին շերտն ընդգրկող այրվածքն է: Վնասված մասի մաշկը կարմրած է, չոր, այտուցված:

Մասամբ թափանցող այրվածքն ընդգրկում է մաշկի երկու շերտերը: Այս դեպքում մաշկը կարմրում է, առաջանում են հեղուկով լցված բշտեր:

Խոր թափանցող այրվածքը վնասում է մաշկը եւ խորանիստ հյուսվածքները: Այրվածքի մակերեսը լինում է շագանակագույն

կամ գորշ: Խոր թափանցող այրվածքների ապաքինումից հետո առաջանում են կոպիտ սպիներ:

Այրվածքների ծանրության գնահատում

Ծանր այրվածքները վտանգավոր են վարակի անցման, ջրազրկման ու շոկի զարգացման տեսակետից եւ պահանջում են անհապաղ մասնագիտական բուժօգնություն: Դրա համար շատ կարեւոր է ժամանակին ճանաչել ծանր այրվածքները:

Այրվածքի ծանրությունը պայմանավորված է դրա խորությամբ, մակերեսով, տուժածի տարիքով, առողջական վիճակով, մարմնի վրա այրվածքի տեղակայմամբ:

Բնականաբար, որքան խորն է այրվածքը, այնքան այն վտանգավոր է:

Շատ կարեւոր է ճիշտ գնահատել այրվածքի մակերեսը, քանի որ ինչքան մեծ է այն, այնքան մեծ է շոկի զարգացման վտանգը:


Այրվածքի մակերեսը կարելի է որոշել, գիտենալով, որ ձեռքի ավել կազմում է մարմնի ընդհանուր մակերեսի 1 տոկոսը:

Չափահաս մարդու գլխի եւ պարանոցի մակերեսը կազմում է մարմնի ընդհանուր մակերեսի 9 տոկոսը, յուրաքանչյուր ձեռքը՝ 9 տոկոսը, յուրաքանչյուր ոտքը՝ 18 տոկոսը, իրանի առջեւի կամ հետեւի մասը՝ 18 տոկոսը եւ շեքի շրջանը՝ 1 տոկոսը: Եթե վնասվել է մարմնի մակերեսի 1 տոկոսից ավելին, ապա պետք է դիմել բժշկի:

Իսկ եթե վնասվել է չափահաս մարդու մարմնի մակերեսի 10 տոկոսից ավելին, ապա պետք է անհապաղ ահազանգել կամ տուժածին հասցնել հիվանդանոց, քանի որ այս չափերի այրվածքները կյանքին անմիջական վտանգ են սպառնում:

Փոքր երեխաների եւ տարեց մարդկանց կյանքի համար վտանգավոր են մարմնի մակերեսի 5-7 տոկոսից ավելին ընդգրկող այրվածքները:

Շատ վտանգավոր են նաեւ այն այրվածքները, որոնք տեղակայված են տուժածի գլխի եւ պարանոցի շրջանում, քանի որ դրանք կարող են դժվարացնել շնչառությունը: Վտանգավոր են նաեւ ձեռքի ասիի, սեռական օրգանների շրջանում տեղակայված այրվածքները, քանի որ շատ ցավոտ են եւ կարող են շոկի պատճառ դառնալ:



ԻՆՉ ԱՆԵԼ

Այրվածքների դեպքում ճիշտ առաջին օգնություն ցուցաբերելով դուք կկարողանաք զգալիորեն թեթևացնել տուժածի վիճակը: Քիչ չեն այն դեպքերը, երբ այրվածքների ժամանակ սխալ օգնության հետեւանքով տուժածի վիճակը դարձել է ծայրահեղ ծանր:

Այրվածք ստանալու դեպքում առաջին հերթին դադարեցրեք այրվածք առաջացնող գործոնի ազդեցությունը:

Եթե բռնկվել է ձեր հագուստը, ապա կիրառեք «կանգնիր, ընկիր եւ գլորվիր» սկզբունքը: Ընկեք գետնին եւ գլորվեք այնքան, մինչեւ կրակը մարի:

Եթե բռնկվել է մեկ ուրիշի հագուստը, ապա թույլ մի՛ տվեք նրան խուճապի մատնվել եւ վազել: Անմիջապես զցեք նրան գետնին եւ որեւէ հաստ գործվածքով հանգցրեք կրակը:

Արձակեք եւ այրվածքի մակերեսից հեռացրեք տաք հեղուկով ներծծված հագուստը: Որոշ սինթետիկ գործվածքներ ջերմությունից հալվում են եւ կպչում մաշկին: Մի՛ պոկեք մաշկին կպած հագուստը, որպեսզի մաշկը լրացուցիչ չվնասեք, այլ մկրատով զգուշությամբ կտրելով հեռացրեք հագուստի ազատ մասերը:

Եթե վնասված է վերջույթը, ապա հնարավորին չափ արագ հեռացրեք մատանիները, ժամացույցը, այլ զարդերը եւ բոլոր ճնշող իրերը:

Նույնիսկ այրվածք առաջացնող գործոնը հեռացնելուց հետո հյուսվածքները շարունակում են ենթարկվել ջերմային վնասման: Հետեւաբար պետք է սառեցնել այրված մակերեսը: Դեմքին կամ մարմնի այն մասերին, որոնք հնարավոր չէ սառեցնել հոսող ջրով, տեղադրեք սառը, թաց սրբիչ, սավան կամ այլ գործվածք: Այրվածքի մակերեսը պետք է սառեցնել առնվազն 15-20 րոպե: Եթե այրված մասը ջրից հանելիս տուժածը շարունակում է ցավ զգալ կամ այրված մակերեսը դեռ տաք է, ապա շարունակեք սառեցումը: Տարածուն այրվածքները երկար ժամանակ ջրի տակ մի՛ պահեք՝ մարմնի գերսառեցումից խուսափելու համար:



Վարակի ներթափանցումը նվազեցնելու համար ծածկեք այրված մակերեսը ստերիլ անձեռոցիկով կամ մաքուր գործվածքով եւ թույլ վիրակապեք: Եթե այրվածքը ընդգրկում է մեծ մակերես, ապա ծածկեք այն մաքուր չոր սավանով կամ մազախավ չունեցող այլ մաքուր գործվածքով:

Ինչպես արդեն նշեցինք, այրվածքները վտանգավոր են շոկի զարգացման տեսակետից: Շոկի զարգացումը կանխելու համար, եթե տուժածի շնչառությունը դժվարացած չէ, պառկեցրեք նրան, ոտքերը բարձրացրեք 20-30 սմ: Բարձր պահեք նաեւ տուժածի վնասված հատվածը: Եթե տուժածը գիտակից է, տվեք նրան հեղուկներ՝ հյութեր, հանքային ջրեր:

Անհրաժեշտության դեպքում ահազանգեք շտապ օգնություն կամ տուժածին հասցրեք հիվանդանոց: Հիշեք, որ նույնիսկ մասամբ թափանցող, բայց տարածուն այրվածքների դեպքում բուժօգնության ուշացումը կարող է մահվան պատճառ դառնալ: Ժամանակին ցուցաբերած ճիշտ մասնագիտական օգնությունը կարող է ոչ միայն կյանք փրկել, այլեւ նվազեցնել տառապանքները եւ այրվածքների անցանկալի հետեւանքները: Այս ամենն առավել կարելու է, եթե տուժածը փոքր երեխա է կամ տարեց մարդ:

ԻՆՉ ՉԻ ԿԱՐԵԼԻ

Մենք հատուկ ուզում ենք անդրադառնալ այն բանին, թե ինչ չի կարելի անել այրվածքների ժամանակ, քանի որ այս դեպքում սխալ ցուցաբերած օգնությունը հաճախ է դառնում բարդությունների եւ լրացուցիչ տառապանքների պատճառ:



Երբեք մի՛ փորձեք այրվածքի վրա քսել ձեթ, յուղ կամ նման այլ միջոցներ: Դրանք, պատելով այրված մակերեսը, խանգարում են ջերմատվությանը: Արդյունքում այրվածքը ծանրանում է: Այս միջոցները կարող են նաեւ վարակի աղբյուր հանդիսանալ: Բացի այդ, պատելով այրված


- 🔥 մակերեսը, դրանք փոխում են այրվածքի տեսքը, դժվարացնում ախտորոշումը եւ բուժումը:
- 🔥 Երբեք մի՛ բացեք եւ մի՛ վնասեք բշտերը, այլապես շատ կմեծանա վարակի ներթափանցման վտանգը: Մի՛ դիպեք այրվածքին եւ մի՛ շնչեք նրա վրա:
- 🔥 Մի՛ պոկեք մարմնին կպած հագուստը:




ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Շատ հաճախ այրվածքներն առաջանում են անզգուշության պատճառով: Հետեւելով պարզ նախազգուշական քայլերի՝ կարելի է կանխել այրվածքները:

- 🔥 Էլեկտրական սարքավորումների լարերը ծալե՛ք կամ փաթաթե՛ք:
- 🔥 Մի՛ թողեք երեխաներին առանց հսկողության լոգարանում, խոհանոցում կամ այն տեղերում, ուր միացրած ջեռուցիչներ, սալօջախներ կան:
- 🔥 Տնային ջեռուցիչներն օգտագործեք նվազեցրած ռեժիմով, ջուրը շատ մի՛ տաքացրեք:

 Սալօջախի վրա կաթսաների բռնակները դարձրեք այնպես, որ երեխաները չկարողանան դրանց հասնել:

 Ջգույշ եղեք կրակի հետ: Մի՛ թողեք երեխաներին խաղալ լուցկու, գազայրիչների եւ կրակի այլ աղբյուրների հետ: Մի՛ ծխեք անկողնում:

ՏԱՐԱՐԱՆՈՒՄ



Դպրոցների աղետների ռիսկի կառավարման թիմ, կազմավորումներ, դերեր և պարտականություններ



Դպրոցի կառուցվածքային և ոչ կառուցվածքային ռիսկերի մեղմացման աշխատանքներ



Դպրոցի պատրաստվածության վարժանքներ, տարիանում



Առաջին հերթին անհրաժեշտ է սահմանել ինչպես եւ ինչ կարգով պետք է կատարվի մարդկանց ու գույքի տարահանումը եւ որոշել իրերը հավաքելու համար նախատեսված վայրը: Անշուշտ, գլխավոր նպատակը մարդկանց կյանքը փրկելն է, եւ մնացած ամեն ինչ պետք է իրականացվի այս հայեցակարգից ելնելով:

Բոլոր հասարակական եւ արտադրական շինությունները պետք է ունենան հստակ նշված վթարային ելքեր, որոնք երաշխավորեն արագ, առանց դժվարությունների անցում:

Դռները պետք է միշտ բացվեն ներսից: Այդ անցումներում չպետք է լինեն կողմնակի առարկաներ, աստիճաններ, պտտվող դռներ, ինչպես նաեւ այրվող նյութեր, պատերը պետք է պատրաստված լինեն հրակայուն նյութերից: Առանձին պիտի նախատեսված լինեն փրկության մյուս ուղիները՝ արտաքին աստիճաններ, տանիքներ, պատշգամբներ ու պատուհաններ

տանող ելքերը: Աստիճանները միշտ պետք է բաց, ազատ լինեն եւ ցանկացած պահի օգտագործելու պատրաստ, անգամ այն ժամանակ, երբ սովորաբար օգտվում են միայն վերելակից: Ցավոք, հաճախ այս կանոնները չեն պահպանվում. անկոչ հյուրերից խուսափելու նպատակով ելքերը բանալիով փակված են լինում: Իսկ «Գործ չունեն, դա ինձ չի վերաբերում» մտածելակերպը կարող է բերել մեծ աղետների: Մի՛ մոռացեք նաեւ, որ վերելակը տարահանման միջոց, ուղի չի համարվում, ընդհակառակը, հրդեհի դեպքում դրանից երբեք չպետք է օգտվել:

Յուրաքանչյուր մարդ պետք է իմանա, թե հրդեհի դեպքում ինչպես կարող է արագ հեռանալ շենքից: Դրա համար բոլոր կազմակերպություններում, հաստատություններում եւ ձեռնարկություններում, հատկապես՝ դպրոցներում, հարկավոր է անցկացնել ընդհանուր հատուկ վարժանք-պարապմունքներ:

Չրդեհը մարելու եւ մարդկանց փրկելու ժամանակ անհրաժեշտ է հիշել, որ մեծահասակ մարդիկ ավելի հաճախ են ի վիճակի իրենց վրա ուշադրություն հրավիրել, իրենց ներկայության մասին տեղեկացնել: Եթե նրանք կրակից ու ծխից անակնկալի են եկել, կորցրել գիտակցությունը, ապա նրանց պետք է հիմնականում որոնել աստիճանների, պատուհանների կամ այլ հնարավոր ելքերի կողքին: Հիվանդ մարդիկ, որոնք ի վիճակի չեն շարժվելու, կարող են գտնվել մահճակալներին, աթոռների վրա կամ դրանց կողքին: Չրդեհների ժամանակ մեծ բարդություններ են առաջանում երեխաներին որոնելիս: Սովորաբար նրանք թաքնվում են այնպիսի տեղերում, որոնք մեծերի մտքով չեն էլ անցնում, ուստի նրանց հայտնաբերելն ու փրկելը հաճախ ձգձգվում է:

Բոլոր մարդկանց փրկելուց հետո առաջին խնդիրը նրանց հանգստացնելն է, ապա՝ անվտանգ տեղ փոխադրելը՝ բոլոր հնարավոր ճանապարհներից առավել կարճն օգտագործելով:

Չրդեհի, ինչպես եւ մյուս աղետների ժամանակ, հնարավոր է խուճապի առաջացում: Առավել հաճախ դա դրսևորվում է մարդկանց պատահական կուտակումների վայրերում՝ կինոթատրոններում, թատրոններում, հյուրանոցներում, մարզադաշտերում եւ այլուր: Աշխատավայրում եւ ուսումնական հաստատություններում, որտեղ մարդիկ լավ գիտեն շենքն ու միմյանց, խուճապ հազվադեպ է լինում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՉՐԴԵՅՆԵՐ



Յուրաքանչյուր ժողովուրդ հպարտանում է ոչ միայն իր գիտատեխնիկական նվաճումներով, մշակույթով ու արվեստով, այլև իր երկրի բնությամբ՝ լինի դա լեռնաշխարհ, անտառ ու գետ, լիճ կամ ծով... Տավուշեցիները բացառություն չեն:

Բոլոր դեպքերում բնության բաղադրատարրերի մեջ իր թովչանքով ու արժեքավորությամբ ուրույն տեղ է զբաղեցնում անտառը: Պատկերացրեք, որքան աղքատիկ ու անշուք կլինեն երկիր մոլորակն առանց անտառների եւ, ընդհանրապես, կյանք կարարվե՞ր նրա վրա: **Անտառն ի սկզբանե ապավեն է եղել մարդուն թե՛ տնտեսական, թե՛ պարենային, թե՛ հանգստի եւ այլ ոլորտներում: Անտառն է մթնոլորտը թթվածնով հարստացնող հիմնական մատակարարը, բնական միջավայրի կայունարարը, կենդանական աշխարհի պահապանը:**

20-րդ դարի 70-ական թվականներին աշխարհում անտառների զբաղեցրած ընդհանուր տարածքը մոտ 4,2 միլիարդ հեկտար էր: Հայաստանում անտառներն այդ տարիներին կազմում էին տարածքի մոտ 12 տոկոսը՝ 345 հազար հեկտար:

Հայերի անտառասեր լինելու մասին է վկայում Մովսես Խորենացին: Նա գրում է, որ Խոսրով Կոտակ թագավորը (332-338 թթ.) Ազատ գետի մոտ տնկեց անտառ, որը կոչվեց նրա անունով:

1980-ական թվականների վերջից, երբ հայտնի պատճառներով մեր հանրապետությունը հայտնվեց վառելիքաէներգետիկ ճգնաժամի մեջ, սկսեցին անտառային զանգվածների անխնա հատումներ, որոնք կազմեցին հազարավոր հեկտարներ: Այսօր Հայաստանի տարածքի միայն 11,2 տոկոսն է անտառածածկ:

Ամեն տարի ամռանը, հատկապես երաշտի պայմաններում, տարերային գործոնների եւ բնակչության անզուլուրջան հետեւանքով անտառներում տեղ-տեղ բռնկվում են հրդեհներ, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում տնտեսությանը, մարդկանց կյանքին ու անվտանգությանը: Ձանգվածային անտառային հրդեհները հատկապես վտանգավոր են, երբ ուղեկցվում են քամիներով ընդգրկելով զգալի տարածքներ:

Հանրապետության քաղաքացիներն ամառային շոգ, հրդեհավտանգ օրերին, անտառ գնալիս պետք է կրակի հետ զգույշ վարվեն, չվնասեն մեր, առանց այն էլ վիրավոր անտառները:

Անտառային հրդեհներն ավելի հաճախ ծագում են.



այն մարդկանց մեղքով, ովքեր հանգստի վայրերում թողնում են չմարված խարույկներ կամ ծխախոտի մնացորդներ.



կրակի հետ երեխաների խաղալու հետեւանքով:

Հազվադեպ են մեղավոր լինում բնական պատճառները.



կայծակի հարվածը.



տորֆով հարուստ հողի ինքնայրումը:

Իսկ որո՞նք են այն գործողությունները, որոնց պետք է տիրապետեն քաղաքացիները անտառային հրդեհների դեպքում:

Նախ, պատրաստվելով անտառ հանգստի կամ տուրիստական արշավի մեկնելու՝ ձեզ հետ վերցրեք կացին, ծալովի բահ եւ դույլ: Ձգալով ծխի հոտ՝ մոտեցեք եւ պարզեք՝ ինչ է այրվում, քամին որ կողմ է փչում, ինչպիսին է հրդեհի տարածման վտանգը, կրակի շարժման գոտում արդյոք երեխաներ կան: Գնահատեք իրավիճա-

կը. արդյոք արժե՞ հրդեհը մարել սեփական ուժերով, թե՞ ավելի լավ է օգնություն կանչել եւ չթողնել կրակն ուժգնանա: Հրդեհի մասին հեռախոսով հայտնեք հրշեջ ծառայություն՝ 911 (հատկապես հիմա, բջջային հեռախոսների առկայության պայմաններում, դա շատ հեշտ է):

Կրակի վրա մերձակա ավազանից ջուր լցրեք, հող ցանեք: Մարման համար օգտագործեք սաղարթավոր ծառերի տեսակների կամ 1,5-2 մետր երկարության մատողաշ ծառերի ճյուղերի կապուկ, թաց հազուստ, ամուր կտոր: Կրակի եզրաշերտին կողքից՝ հրդեհի օջախի կողմը սահող հարվածներ հասցրեք, ասես ավելելով, սրբելով կրակը, ճյուղերը, կտորը յուրաքանչյուր հարվածից հետո շրջեք, որպեսզի դրանք այդ ձեւով սառչեն ու չայրվեն: Ոչ մեծ կրակը տրորեք ոտքերով, մի թողեք այն տարածվի դեպի ծառերի բներն ու սաղարթները:

Մարելով փոքր հրդեհը՝ մի հեռացեք այնքան ժամանակ, քանի չէք համոզվել, որ կրակը նորից չի բորբոքվի: Հրդեհի տեղի ու ժամանակի, ինչպես նաեւ դրա հնարավոր պատճառների մասին հայտնեք անտառտնտեսություն կամ հրշեջ ծառայություն:

Անտառը մարդու բարեկամն է, ազգային հարստություն: Ուրեմն, եկեք սիրենք, փայփայենք ու աճեցնենք նրա կենսատու կանաչ զանգվածները:

ԱՆՏԱՌԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ Է
ՊԱՅՏԱՆՆԵՔ ԱՆՆ ՀՐԴԵՂԵՐԻՑ ԵՎ ԱՆՏԱՌԳՐԵՐԻՑ



ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ
Պաշտպանենք, խնամենք ու հարստացնենք՝ կայուն կառավարենք մեր անտառները:
Անտառը ոչ թե միայն փայտանյութ է ու խնջուլքի վայր, այլ, առաջին հերթին՝ հարստության ու բարիքի շտեմարան, երկրի առողջ շնչառության գրավական: Հիշե՛ք, անտառն ազգային անվտանգության՝ բնապահպանական, տնտեսական, պարենային, էներգետիկ, սոցիալական և կենսանվտանգության, աղետների ռիսկի կառավարման, կլիմայի փոփոխության հարմարվողականության, կենսաբազմազանության պահպանման, հանրային առողջության, երկրի կայուն զարգացման, նաև՝ քաղաքացիական պաշտպանության, կենսական բաղադրիչն է:



**ՀՐԴԵԸԸ
ՍԱՐՍԱՓԵԼԻ ԲԱՆ Է.
ԶԻ ՃԱՆԱԳՈՒՄ ՈԳ
ԱԶԳՈՒԹՅՈՒՆ, ՈԳ ՍԵՌ ՈՒ
ՏԱՐԻՔ, ՈԳ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆ
ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՐՔ:**

112

ՀԻՇԵՔ

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆՈՍԱՀԱՄԱՐԸ

ԴՈՒ ՄԻՇՏ ԿԱՐՈՂ ԵՍ
ՓՐԿԵԼ ՔՈ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻ
ԿՅԱՆՔԸ, ԵԹԵ ԻՐԱԳԵԿՎԱԾ
ԵՍ ՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԿԱԾ:



Անսարք ծաղկաշղթան,
Մի՛ միացրու, հիշի՛ր,
Որ հետո տունը չկանչես
Հրդեհ ու բռնչի:



Կրակմարիչ չունենք,
Խցանել ենք ելքը.
Քա որ հողեի եղավ,
Քա ու՛ր է մեր խելքը:



Գեղեցիկ են, բայց մոռնրով
Տոնածառ մի՛ գարդարիր.
Թե չես ուզում հրդեհի մեջ
Անցնի՛ նոր տարիդ...



Պիտի իմանա ամեն մեկը.
Հրդեհի դեպքում՝ «911»-ը:



Եթե վարդակի մեջ միանգամից
Տեղավորես բոլոր խրոցները
Ապա սենյակի մեջ պար կործեն
Էլետրալարերի բոցերը:



Կրակն արհեստը
Լինի դասաստեղծելու,
Որ կրակը չհարթի
Հրդեհի դեպքում:



Ես այս մի խաղը դեռ չեմ խաղացել,
Ու վարդակի մեջ մտա ծաղերով...
Մինչև առաստաղ կայծեր ու բոցեր.
Բախտդ բերել է, որ ողջ ես, հերոս:



Երեկ անտառ զնացինք,
Գիշերով այն չքացավ...
Մեր մի փոքրիկ խարույկից
Անտառն այրվեց վերջացավ:



Վառվում է նրբախավ բարդու,
Բոցերը վազում են դեպի տուն,
Սևա խաղ անող մի բալիկ,
Իսկ տունը մնաց անտանդ:




Փոքրիկ բարեկամ, արի, քեզ հուշե՛մ
Կրակը դու մի դարձրու խաղալիք,
Զէ՛ որ քո խաղից կարող են տուժել,
Այնքա՛ն մեծիկներ ու այնքա՛ն ռախիկ:



Տանը ծուխ է ու կրակ,
Թարթվել պետք չէ,
Զարկավոր է շատ արագ
Տնից դուրս փախչել:



Դյուրությամբ վառվող իրերը,
Պահեք այնտեղ, ուր անվտանգ է,
Կկապվեն հրդեհի ձեռները,
Եւ կարողարացվի ձեր ջանքը:



Մի քիչ խաղացի՛րք ընդամենը,
Բայց հետո հանկարծ՝ թող ու փախիր.
Լուցկին, որ բերեց մեր Արմեն,
Նոր տունը վառեց, դարձրեց մոխիր:



Լուցկին ձեռքը վերցնե՛՛ վերջ
Վառնգավոր ես արդեն,
Լուցկու փոքրիկ տուփի մեջ
Բնակվում է մեծ հրդեհ:





**Հիշիր, որ դու հզոր ու նվիրված
զավակն ես Տավուշի:**

Հիշիր, որ դու թոռնիկն ես դյուցազնական Սասնա
Դավթի, նրա պես ազնիվ, քաջ ու հարեհաս,
հավատարիմ ինքդ քեզ ու հայրենիքին,
արժանապատիվ պաշտպան թույլ ու կարիքավորի,
հուսալի պատվար ընդդեմ խավարի:



*Մեկ ջանք է՝
արթուն կայելով*

112 ՀԻՇԵՔ
ՓՐԿՈՒԹՅԱՆ
ՀԵՌԱՆՈՍԱԳԱՄԱՐԸ



ՏԱՎՈՒՇ
MEDIA

Ձեր բնակավայրին, Ձեզ և Ձեր ընտանիքին սպառնացող բոլոր վտանգների, դրանց հետևանքների ու նվազեցման վարքականոնների մասին կարող եք տեղեկանալ ՆԳՆ Տավուշի փրկարարական վարչությունից՝ Իջևան, Արցախյան 4, հեռ. 060726152 կամ էլ **Տավուշ Մեդիայի կայքի Դիմակայուն Տավուշ** շտեմարանից՝ www.tavushmedia.am

Տպագրվում է
ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՏԱՎՈՒՇ
ծրագրի շրջանակում:
ԱՄՔՈՐ ԱՐՄԵՆԻԱ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
աջակցությամբ:

UMCOR
Armenia Foundation